



A F I C

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՍՈՅԻԱՅԻԱ**

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՂԵՅՈՒՅՑ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԿՐՈՒԹՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2007

ՀԱՄԱՌՈՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

I. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Հարկային և հաշվապահական հաշվառում

Շահութահարկը որոշելիս դրա հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոններ ի հիման վրա, եթե «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով չեն նախատեսված դրանց կիրառման առանձնահատկությունները (օրենքը գործում է 1998թ. հունվարի 1-ից): Հարկվող շահույթը որոշելիս ակտիվներն ու պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման արժեքով) բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների:

Հարկվող շահույթը որոշելիս ակտիվներն ու պարտավորություններն որոշվում են սկզբնական արժեքով (ձեռք բերման արժեքով), իսկ պահուստների (պահուստային ֆոնդերի) կազմավորման ժամանակ առաջացող եկամուտներն ու հանումներն որոշվում են, եթե դրանք նախատեսված են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով:

Ռեզիդենտություն

Շահութահարկ են վճարող են հանդիսանում ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտները: Ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած) կազմակերպությունները, բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների:

Ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացված հարկվող շահույթը: Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթ

Հարկվող շահույթ հարկատուի համախառն եկամտի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված նվազեցումների (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ) դրական տարբերությունն է:

Համախառն եկամուտ

Համախառն եկամուտը հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Եկամուտ է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների ներհոսքը, աճը կամ պարտավորությունների նվազումը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի ավելացմանը:

Եկամուտ չեն համարվում՝

- մասնակիցների (բաժնետեր, փայատեր, անդամ) կողմից հարկատուի կանոնադրական կապիտալում (հիմնադրամում) կատարված ներդրումները,

- հարկատուի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը,
- համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցները,
- արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը,
- օրենքով տրամադրվող հարկային արտոնությունների գումարները,
- ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (այդ թվում՝ անդամավճարները) և ծառայությունները:

Ծախսեր

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Ծախս է համարվում հաշվետու տարվա ընթացքում ակտիվների արտահոսքը, նվազումը կամ պարտավորությունների աճը, որոնք հանգեցնում են հարկատուի սեփական կապիտալի նվազեցման:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝

- նյութական ծախսերը,
- աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները,
- պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները,
- ամորտիզացիոն մասհանումները,
- ապահովագրական վճարները,
- չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները,
- վարկերի և այլ փոխառությունների տոկոսները,
- երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և այլ բանկային ծառայությունների համար վճարները,
- գովազդային ծախսերը,
- գործուղման ծախսերը,
- դատական ծախսերը,
- պատճառված վնասի հատուցումը,
- տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները (որոշակի բացառություններով),
- աշխատողների հավաքագրման ծախսերը,
- աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը,
- ֆակտորինգային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը,
- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը,
- հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ ծախսերը:

Ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռք բերման (և համապատասխան դեպքերում՝ այլ հարկատուների եկամուտներին վերաբերվող) փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 25.08.98թ. թիվ 525 որոշմամբ:

Ծախսերի թվին չեն դասվում՝

- հարկատուի սեփական կապիտալի բաշխումը մասնակիցներին՝ շահաբաժինների կամ նման այլ ձևով,
- այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները,
- հարկատուի կողմից հետ գնված իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների իրացման և հաշվեկշռային արժեքի բացասական տարբերությունը,
- արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման բացասական արդյունքը,
- ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացված ակտիվների (այդ թվում՝ անդամավճարների) գծով ծախսերը կամ դրանց հաշվին կատարված ծախսերը:

Հաշվառումը հաշվեգրման եղանակով

Հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով: Հաշվեգրման եղանակով հաշվառման դեպքում հարկատուն եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է, համապատասխանաբար, ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Հիմնական միջոցների մաշվածություն

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների համար նախատեսված են հիմնական միջոցների հինգ խոշոր խմբեր, որոնցով սահմանված են ամորտիզացիայի հետևյալ նվազագույն ժամկետները՝

- շենքերի, շինությունների և փոխանցվող հարմարանքների համար - 20 տարի,
- հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների շենքերի և շինությունների համար - 10 տարի,
- չնշված հոսքային գծերի, ռորոտատեխնիկայի համար - 3 տարի,
- հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար - 1 տարի,
- այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար - 5 տարի:

Մինչև 50,000 դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի, ինչպես նաև այն շենքեր, շինությունների համար, որոնք գտնվում են աղետի գոտում: Հարկվող շահույթը որոշելու նպատակով հարկատուն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ, սակայն տվյալ խմբի համար վերոհիշյալ ժամկետներից ոչ պակաս:

Նորմավորվող ծախսեր

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանափակված է ծախսերի և եկամուտների ցանկը, համաձայն որի ՀՀ կառավարությանն իրավունք է տրված սահմանել այն նորմերը, որոնց գերազանցման դեպքում, հարկվող շահույթի որոշման ժամանակ, դրանք չեն նվազեցվում:

Որոշակի նվազեցումների առավել թույլատրելի չափերը, որոնք կատարվում են հարկման նպատակների համար, սահմանված են ՀՀ կառավարության 27.11.98թ. թիվ 753 որոշմամբ:

Այսպես, հարկատուի հարկվող շահույթը կամ հարկվող եկամուտը հաշվարկելու նպատակով, համախառն եկամտից կարող են նվազեցվել՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված վճարների գծով ծախսերը՝ հաշվետու տարվա համար համախառն եկամտի գումարի 0,5 տոկոսը չգերազանցող գումարի չափով,
- Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գովազդի համար ծախսերը՝ հաշվետու տարվա համար համախառն եկամտի գումարի 3 տոկոսը չգերազանցող գումարի չափով կամ հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հարկատուների կողմից արտահանված ապրանքների կամ ծառայությունների արժեքի 20 տոկոսի չափով,
- մարքեթինգային (ապրանքների և ծառայությունների շուկայի ուսումնասիրություն, ապրանքների և ծառայությունների շուկայում առաջ խաղացում) ծախսերը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ չափը դեռևս չի սահմանվել,
- Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կադրերի պատրաստման համար ծախսեր՝ հաշվետու տարվա համար համախառն եկամտի գումարի 4 տոկոսը չգերազանցող գումարի չափով, բայց ոչ ավելի, քան 3մլն. դրամ ամեն մի աշխատողի համար,
- Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կադրերի վերապատրաստման համար ծախսերը՝ հաշվետու տարվա համար համախառն եկամտի գումարի 1 տոկոսը չգերազանցող գումարի չափով, բայց ոչ ավելի, քան 1մլն. դրամ ամեն մի աշխատողի համար,
- հատուկ սննդի համար կատարված ծախսերը՝ ամեն աշխատողին իր աշխատանքի և նրա վրա դրված պարտականությունների համար վճարված ամբողջ եկամտի 20 տոկոսը չգերազանցող գումարի չափով, բայց ոչ ավելի, քան 200 հազ. դրամը,
- արտահագուստի և այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը՝ ամեն աշխատողին իր աշխատանքի և նրա վրա դրված պարտականությունների համար վճարված ամբողջ եկամտի 10 տոկոսը չգերազանցող գումարի չափով, բայց ոչ ավելի քան, 200 հազ. դրամ ամեն մի աշխատողի համար,
- աշխատակիցների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների գծով ծախսերը՝ ամեն աշխատակցին իր աշխատանքի և նրան համապատասխան պարտականությունների համար վճարված ամբողջ եկամտի 5 տոկոսը չգերազանցող գումարի չափով,
- Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործուղման ծախսերը՝ հաշվետու տարվա համար համախառն եկամտի գումարի 5 տոկոսը չգերազանցող գումարի չափով: Ի դեպ, գործուղման մեկնած անձի ծախսերն ենթակա են նվազեցմանը գործուղման յուրաքանչյուր օրացույցային օրվա համար 25 հազ. դրամը չգերազանցող գումարի չափով,
- Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման ընթացքում օրապահիկի ծախսերը՝ գործուղման մեջ գտնվող անձի համար յուրաքանչյուր օրացույցային օրվա համար 8 հազ. դրամը չգերազանցող գումարի չափով,
- ներկայացուցչական ծախսերը՝ հաշվետու տարվա համար համախառն եկամտի գումարի 0,5 տոկոսը չգերազանցող գումարի չափով, բայց ոչ ավելի, քան 5մլն. դրամը,
- առողջապահական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, ինչպես նաև բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար ծախսերը՝ հաշվետու տարվա համար համախառն եկամտի գումարի 0,2 տոկոսը չգերազանցող գումարի չափով:
-

Վնասների փոխանցում

Հարկատուի ընթացիկ և նախորդ տարիների գործունեության արդյունքներով վնասի առկայության դեպքում վնասը փոխանցվում է հաջորդ տարիներ (այսպես կոչված «ուղղակի» փոխանցում): Եթե մինչև 2001թ. հունվարի 1-ը կազմակերպությունը կարող էր վնասները փոխանցել հաջորդ տարիներ առանց որևէ ժամանակային սահմանափակումների, ապա ներկայումս բոլոր կազմակերպությունների (բացառությամբ բանկերի) համար նման փոխանցումը սահմանափակվում է վնասների ստացման տարվան հաջորդող 5 տարի ժամկետով:

Այսպիսով, մինչև 2001թ. հունվարի 1-ը հարկատուի գործունեության արդյունքում կուտակված և նախորդ տարիների ընթացքում համախառն եկամտից չնվազեցված վնասներն ենթակա են նվազեցմանը մինչև 2005թ. դեկտեմբերի 31-ը:

Շահաբաժիններ

Հայկական հարկային համակարգը բացառում է կազմակերպությունների տնտեսական կրկնակի հարկումը, այսինքն, հարկատուի հարկվող շահույթի որոշման ժամանակ նրա համախառն եկամուտը նվազեցվում է ստացված շահաբաժինների գումարի չափով (բացառությամբ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների): Ենթադրվում է, որ շահույթն ամբողջովին հարկվում է շահաբաժիններ բաշխող կազմակերպությունների մակարդակի վրա, իսկ բաշխված շահույթը բաժնետերի մոտ այլևս չի հարկվում:

Սոցիալական ապահովագրություն

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործատուի հաշվին իրականացված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի հատկացումների չափով: Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործառուցող յուրաքանչյուր վարձու աշխատողի համար սոցիալական վճարները կատարում են հետևյալ չափերով՝

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտների ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 20.000 դրամ	7.000 դրամ
20.000-ից մինչև 100.000 հազ.դրամ	7.000 դրամ գումարած 20.000 դրամը գերազանցող գումարի 15 տոկոսը
100.000 դրամից ավելի	19.000 դրամ գումարած 100.000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը

Հարկի դրույքաչափը

Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Օտարերկրյա ներդրումների խրախուսումը

Եթե օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի (բացառությամբ բանկերի) կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընհանուր արժեքը 1998թ. հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն. դրամ, ապա տվյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝

Ձեռնարկության կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրման սահմանված չափաքանակը լրանալու տարեթիվը	Օտարերկրյա ներդրումներով կազմակերպության շահութահարկի նվազեցման չափը՝ ըստ տարիների	
	100 տոկոսով	50 տոկոսով
1998	1999 և 2000թ.	2001- 2008թ. ներառյալ
1999	2000 և 2001թ.	2002 - 2009թ. ներառյալ
2000	2001 և 2002թ.	2003 – 2008թ. ներառյալ
2001	2002 և 2003թ.	2004 – 2007թ. ներառյալ
2002	2003 և 2004թ.	2005 – 2006թ. ներառյալ
2003	2004 և 2005թ.	
2004	2005 և 2006թ.	
2005	2006 և 2007թ.	
2006	2007 և 2008թ.	
2007	2008 և 2009թ.	

Ներդրում է համարվում հարկատուի կանոնադրական կապիտալի ձևավորմանն և համալրմանն ուղղված ակտիվների ներհոսքը և (կամ) պարտավորությունների նվազումը, ինչպես նաև պետական գույքի սեփականաշնորհումը: Գույքային ներդրումներն ենթակա ե պետական գրանցման և նոտարական վավերացման և անկախ փորձագիտական եզրակացության՝ օրենքով սահմանված կարգով: Վերը նշված արտոնությունը չի տարածվում ոչ նյութական ակտիվների ներդրումների վրա:

Հարկատուի լուծարման դեպքում շահութահարկի գումարն այդ արտոնության ժամանակաշրջանի համար հաշվարկվում է լրիվ չափով՝ գործունեության ամբողջ ժամանակաշրջանի համար:

Հարկի հաշվարկումն ու վճարման ժամկետներ

Հարկատուները շահութահարկի գումարը որոշում են ինքնուրույն՝ ելնելով յուրաքանչյուր տարվա ֆինանսական գործունեության արդյունքներից: Շահութահարկ վճարողներն յուրաքանչյուր տարվա արդյունքներով ներկայացնում են շահութահարկի հաշվարկներ, ինչպես նաև հաշվապահական հաշվետվություններ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը, իսկ շահութահարկի գումարները պետք է վճարվեն բյուջե հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ից ոչ ուշ:

Կանխավճարներ

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է ամսեկան կանխավճարի վճարման մեկ ժամկետ՝ ընթացիկ ամսվա 25-ից ոչ ուշ և միայն եթե հարկատուի նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցել է 500 հազ. դրամը:

Եթե ոչ ռեզիդենտների նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցում է 2 մլն. դրամը, շահութահարկի կանխավճարների մուծման վերջնական ժամկետներն են հաշվետու տարվա հուլիսի 1-ն ու դեկտեմբերի 31-ը: Կանխավճարների մուծումները բյուջե կատարվում են յուրաքանչյուր ամիս, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ տասնվեցերորդի չափով (որը տարեկան հանրագումարով կազմում է նախորդ տարվա հարկի գումարի 75 տոկոսը), ոչ ռեզիդենտների համար կատարվում է շահութահարկի կանխավճարների մուծումներ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ քարորդի չափով: Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում հարկատուին իրավունք է տրվում ամսական կանխավճարների մեծություներ որոշել ինքնուրույնաբար:

Եկամուտներ հայաստանյան աղբյուրներից

Հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները դասվում են ակտիվ (եկամուտներ ձեռնարկատիրական գործունեությունից) և պասիվ (ներդրումային) եկամուտների:

Ոչ ռեզիդենտի կողմից ակտիվ եկամուտները կարող են ստացվել ինչպես «ստորաբաժանման» (Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած ոչ ռեզիդենտի առանձնացված ստորաբաժանում) միջոցով, այնպես էլ «վայր» (Հայաստանի Հանրապետությունում առանձնացված ստորաբաժանում չունեցող ոչ ռեզիդենտի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փաստացի վայր) միջոցով: Պասիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից՝ իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) Հայաստանի Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները: Պասիվ եկամուտների թվին կարող ենք դասել շահաբաժինները, տոկոսները, ռոյալթիները:

Շահույթի որոշման պայմանական մեթոդ

Եթե ոչ ռեզիդենտն իր գործունեությունն իրականացնում է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս, չվարելով առանձնացված հաշվառում, ինչը թույլ չի տալիս որոշելու ստորաբաժանման կամ վայրի միջոցով իրականացված գործունեությունից առաջացած հարկվող շահույթը, ապա այն կարող է որոշվել հաշվարկի հիման վրա՝ հարկատուի և հարկային տեսչության մարմնի միջև համաձայնեցված եղանակով: Համաձայնեցված եղանակը հիմք է ծառայում հարկվող շահույթը որոշելիս, քանի դեռ չկա դրա փոփոխման համար բավարար ծանրակշիռ պատճառ:

Հայաստանի Հանրապետությունում ստորաբաժանման կամ վայրի գործունեությունից ստացված հարկվող շահույթը կարող է որոշվել՝

- ոչ ռեզիդենտի համընդհանուր գործունեության հասույթում Հայաստանի Հանրապետությունում գործունեությունից ստացված ապրանքների (ծառայությունների) իրացումից ընդհանուր հասույթի տեսակակար կշռով,
- ոչ ռեզիդենտի համընդհանուր ծախսերում Հայաստանի Հանրապետությունում իրականացված գործունեության հետ կապված ծախսերի տեսակարար կշռով,

- ոչ ռեզիդենտի համընդհանուր անձնակազմում Հայաստանի Հանրապետությունում գրադված անձնակազմի տեսակարար կշռով:

Ստորաբաժանման կամ վայրի հարկվող շահույթը որոշելիս թույլատրվում է փաստաթղթերով հիմնավորված ծախսերի և փաստացի կորուստների բաշխում ոչ ռեզիդենտի և Հայաստանի Հանրապետությունում նրա ստորաբաժանման կամ վայրի միջև: Բաշխված ծախսերը ներառում են, մասնավորապես, կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը՝ կատարված ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ստորաբաժանման հարկվող շահույթը որոշելիս նրա համախառն եկամուտը նվազեցվում է նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ նվազեցումների չափով, բացառությամբ ստացված գրանտների, դիվիդենտների և փոխանցված վնասների:

Պատասխանատվություն խախտումների համար

Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային տեսչության կողմից հաշվարկված) հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով, իսկ հարկային տեսչության կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն հարկատեսակի գծով հարկվող օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ տուգանք՝ հարկի ամբողջ գումարի չափով: Հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տված վնասի 20 տոկոսի չափով: Պատասխանատվության նորմ է նախատեսված նաև հարկային գործակալների համար՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկը չպահելու դեպքում հարկային պարտավորությունն ու սահմանված պատժամիջոցները կրում է հարկային գործակալը:

Կրկնակի հարկման բացառում

Հայաստանի Հանրապետությունում հարկատուների եկամտի գումարը, որը ստացվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, իրեն պատկանող սեփական գույքի արժեքը ներառվում են Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա ընդհանուր եկամտի գումարի մեջ և հարկի չափը որոշելիս հաշվի են առնվում՝ եթե հարկային օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողների եկամտի (շահույթի) գումարից, սեփականության իրավունքով նրանց պատկանող գույքի արժեքից գանձվող հարկերը նվազեցվում են հարկերի այն գումարների չափով, որոնք Հայաստանի Հանրապետության հարկ վճարողներից գանձվել են օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, նվազեցվող գումարների չափը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից (շահույթից), այդ պետություններում գտնվող գույքի արժեքից Հայաստանի հանրապետությունում վճարման ենթակա հարկի գումարները:

II. ԵԿԱՄՏԱՀԱՐԿ

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համաձայն (գործում է 1998թ. հունվարի 1-ից) Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում Հայաստանի Հանրապետությունում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող՝ ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը, իսկ ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը:

Հարկվող եկամտի որոշում

Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

Համախառն եկամուտ

Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացված բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտ են համարում, մասնավորապես՝

- աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները,
- ռոյալթին,
- փոխառության դիմաց ստացվող տոկոսը և այլ հատուցումը (այսուհետև՝ տոկոս),
- շահաբաժինները,
- խաղատներում, շահումներով խաղերում ստացված եկամուտները (շահումները),
- մրցույթների և մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային և դրամական շահումները (մրցանակները),
- նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- ժառանգության կարգով ստացված գույքը և դրամական միջոցները,
- ապահովագրական հատուցումները,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը,
- գույքն օտարելուց ստացված եկամուտը,
- վարձակալության դիմաց ստացվող վճարը և այլ հատուցումը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացվող եկամուտը,
- իրավաբանական անձանց և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից ֆիզիկական անձանց համար կատարված ապահովագրավճարները, բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների:

Նվազեցումներ համախառն եկամտից

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամտից կարող են կատարվել «Եկամտահարկի

մասին» ՀՀ օրենքով նախատեսված նվազեցումները (նվազեցվող եկամուտներ, անձնական նվազեցումներ և ծախսեր):

Անձնական նվազեցումներ

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 20,000 դրամի չափով:

Սոցիալական ապահովագրություն

Հարկվող եկամուտը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գումարի չափով: «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն, վարձու աշխատողները կատարում են սոցիալական վճարումներ աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով:

Դրույքաչափեր

Եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
մինչև 80.000 դրամ	հարկվող եկամտի 10 տոկոսը
80.000 դրամից ավելի	8.000 դրամին գումարած 80.000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

Հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝

Տարեկան հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
մինչև 960.000 դրամ	հարկվող եկամտի 10 տոկոսը
960.000 դրամից ավելի	96.000 դրամին գումարած 960.000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

Բացառություն են կազմում ռոյալթիները, տոկոսները և գույքը վարձակալության տալուց ստացվող եկամուտները՝ եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով: Հարկային գործակալը ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:

Եկամուտների հայտարարագրում և հարկի վճարում

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են հաշվետու տարվան հաջորդող տարվա մինչև մարտի 1-ը ներկայացնել հաշվետու տարվա ընթացքում ստացված եկամուտների մասին հայտարարագիր և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը պետական բյուջե վճարել եկամտահարկի գումարը:

III. ԳՈՒՅՔԱՀԱՐԿ

Վճարողներ

Գույքահարկ վճարող են համարվում ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով պատկանում է հարկվող գույք:

Հարկվող օբյեկտն ու հարկման բազան

Հարկվող օբյեկտ է համարվում սեփականության իրավունքով հարկատուին պատկանող՝

- բնակելի (բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանը, ավտոտնակը, այգետնակը, բնակելի տունը և նրան կից տնտեսական շինությունները՝ անասնաշենք, հացատուն, ամառային խոհանոց, մարագ և այլն) հասարակական և արտադրական նշանակության շինությունները,
- ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը,
- ջրային փոխադրամիջոցները:

Հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ բնութագրիչը, որի հիման վրա «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը:

Դրույքաչափեր

Շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

- հասարակական և արտադրական նշանակության շինությունների համար՝ **0,3 տոկոս,**
- հարկատու համարվող ֆիզիկական անձանց պատկանող այգետնակների և առանձին կանգնած ավտոտնակների համար՝ 0,2 տոկոս,
- այլ բնակելի շինությունների համար՝

Հարկման բազան	Հարկի դրույքաչափը
---------------	-------------------

20մլն. դրամից մինչև 30մլն. դրամը	27.100 դրամ գումարած հարկման բազայի գերազանցող 0,4 տոկոսը	20մլն. դրամը
30մլն. դրամից մինչև 40մլն. դրամը	67.100 դրամ գումարած հարկման բազայի գերազանցող 0,6 տոկոսը	30մլն. դրամը

30մլն. դրամից մինչև 40մլն. դրամը	67.100 դրամ գումարած հարկման բազայի 30մլն. դրամը գերազանցող 0,6 տոկոսը
40մլն. դրամ և ավելի	127.100 դրամ գումարած հարկման բազայի 40մլն. դրամը գերազանցող 0,8 տոկոսը

Ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 150 դրամ կամ յուրաքանչյուր կիլովատի դիմաց 204 դրամ /չկա/: Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

- մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
 - մինչև 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
 - 121 - ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր 1 ձիաուժի համար լրացուցիչ 1000 դրամ:
 - 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր 1 ձիաուժի համար լրացուցիչ 1000 դրամ:
- 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
 - մինչև 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,
 - 200 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:

Մինչև երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով: Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար հարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը:

Արտոնություններ

Գույքահարկից ազատվում են՝

- գծային ինժինեռա - տրանսպորտային շինությունները, եթե դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում,
- ջրամբարները,
- ժամանակավոր տնակները,
- օրենսդրությամբ սահմանված կարգով պատմամշակութային նշանակության ճանաչված հարկվող օբյեկտ համարվող գույքը՝ ՀՀ կառավարության սահմանած ցանկին համապատասխան:
- Առանձին հարկատուների համար համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի արտոնություն: Համայնքի ավագանու սահմանած գույքահարկի արտոնությունների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 5 տոկոսը:

Հարկի հաշվարկումն ու վճարման ժամկետները

Եթե հարկատուն իրավաբանական անձ է, ապա գույքահարկը հաշվարկվում է ինքնուրույն և եռամսյակային հաշվարկները՝ մինչև հաշվետու տարվա յուրաքանչյուր եռամսյակին անմիջապես հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ տարեկան հաշվարկները՝ մինչև հաշվետու տարվան անմիջապես հաջորդող տարվա փետրվարի 25-ը ներառյալ/չկա,/ ներկայացնում է հարկային տեսչության համապատասխան մարմիններ:

Հարկատու համարվող իրավաբանական անձինք հաշվարկված գույքահարկի գումարը վճարում են եռամսյակը մեկ անգամ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող 2-րդ ամսվա 1-ը ներառյալ:

Եթե հարկատուն ֆիզիկական անձ է, ապա գույքահարկը հաշվարկվում է ինքնուրույն և կարող է մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ, գույքահարկի տարեկան հաշվարկները ներկայացնել հարկային տեսչության համապատասխան մարմիններ:

Հարկատու համարվող ֆիզիկական անձինք հաշվարկված գույքահարկի տարեկան գումարը վճարում են մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը:

IV. ՀՈՂԻ ՀԱՐԿ

Հարկման օբյեկտ և վճարողներ

Հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողերի մշտական ու ժամանակավոր օգտագործողները: Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային գուտ եկամուտը, իսկ ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում կադաստրային գնահատման արժեքը:

Դրույքաչափեր

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված գուտ եկամտի 15 տոկոսի չափով:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկը սահմանվում է հետևյալ չափերով՝

- արդյունաբերության (ներառյալ հանքավայրերը և արտադրական գործունեությունից խախտված տարածքները), տրանսպորտի, կապի, ռադիոհեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, զագատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաև ջրային ֆոնդի հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ հետևյալ չափերով՝
 - բնակավայրերի ներսում՝ 1 տոկոս.
 - բնակավայրերից դուրս՝ 0,5 տոկոս:

- անտառային ֆոնդի հողերի (բացառությամբ դրանցում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման միջին արժեքի 1 տոկոսի չափով:
- ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի 1 տոկոսի չափով:

Արտոնություններ

Հողի հարկից ազատվում են՝

- բյուջետային հիմնարկներն ու կազմակերպությունները, ինչպես նաև պետական արգելանոցները և արգելավայրերը, ազգային և ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները և պատմամշակութային նշանակության հողերը, բացառությամբ վարձակալության և ծառայողական օգտագործման տրված հողերի,
- հողային բարեփոխումների և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները՝ հողի սեփականության իրավունքի ձեռքբերման ամսվանից սկսած երկու տարվա ընթացքում,
- հողի այն սեփականատերերը, մշտական և ժամանակավոր օգտագործողները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով եկամտահարկից ազատելու պայմանով տրամադրվել են հողեր՝ այդ ժամկետի ընթացքում,
- բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ և այլն),
- նոր հիմնված և երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր արտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում) դրանց տարացքը 0,1 հեկտար և ավելին լինելու դեպքում:

Հարկի հաշվարկման և վճարման ժամկետները

Ձեռնարկությունները (բացառությամբ գյուղացիական տնտեսությունների), հիմնարկները, կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը, հարկային պետական տեսչության մարմիններին են ներկայացնում հաշվարկներ՝ հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի համար: Քաղաքացիները և գյուղացիական տնտեսությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն, հինք ընդունելով հարկային պետական մարմինների կողմից հաշվարկված և մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը իրենց հանձնված վճարման ծանուցագրերը: Վճարողների հաշվառումը և հողի հարկի հաշվարկումը կատարվում է յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ: Հաշվարկված հարկի գումարները քաղաքացիներն ու գյուղացիական տնտեսությունները պետական բյուջե են վճարում հավասար մասերով, ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը և մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը, իսկ ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները՝ եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակի հաջորդ ամսվա 25-ը:

V. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Վճարողներ

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (գործում է 1997թ. հուլիսի 1-ից) համաձայն ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարող են համարվում օրենքով սահմանված կարգով ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող և հարկվող գործարքներ (գործառնություններ) իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Ֆիզիկական անձանցից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով զանձվում են ԱԱՀ Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքներ ներմուծելիս, եթե նրանց կողմից ներմուծվող ապրանքների քանակը կամ արժեքը գերազանցում են օրենքով սահմանված չափերը:

Չհարկվող միևիմուտ

Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը տվյալ օրացուցային տարում համարվում են ԱԱՀ վճարող, եթե դրան նախորդող օրացույցային տարում այդ անձանց գործարքներից հասույթը գերազանցել է 50 մլն. դրամը: Այս սահմանաչափը չի տարածվում այն անձանց վրա, որոնք իրականացնում են առևտրային գործունեություն խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով և համարվում են հաստատագրված վճարներ վճարողներ, համաձայն «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի:

Անկախ նշված չափից ԱԱՀ վճարող համարվում են այն անձինք, որոնք՝

- գերազանցել են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան սահմանային չափերը,
- «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չեն համարվում կամ դադարել են համարվել պարզեցված հարկ վճարողներ,
- միաժամանակ իրականացնում են ԱԱՀ-ով և հաստատագրված վճարով հարկվող գործունեություն (ԱԱՀ-ով հարկվող գործունեության մասով):

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ընթացիկ տարում համարվում են ԱԱՀ վճարող, եթե նրանց՝ գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 3 մլն. դրամը: Այդ անձինք ԱԱՀ հաշվարկում և վճարում են 3 մլն. դրամը գերազանցող մասի համար:

Անկախ հասույթի մեծությունից, այն անձը, որը հարկային տեսչության համապատասխան մարմին ներկայացնում է հայտարարություն՝ իրեն ԱԱՀ վճարող ճանաչելու վերաբերյալ, կհամարվի այդպիսին՝ հայտարարությունում նշված ամսաթվից, բայց ոչ շուտ, քան այն ներկայացնելու օրվանից: Նշված անձն ԱԱՀ վճարող է համարվում իրեն այդպիսին ճանաչելու օրվանից՝ ընթացիկ տարվա և դրան հաջորդող օրացույցային մեկ տարվա ընթացքում:

Հարկվող գործարքներ (գործառնություններ)

ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

- ապրանքների մատակարարումը՝ գործարք, որն իրականացվում է ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) սեփականության իրավունքը՝ հատուցման դիմաց այլ անձի փոխանցելու միջոցով,
- ծառայությունների մատուցումը՝ ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն), որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց,

ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը): Ծառայությունների մատուցում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը,

- անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառումը՝ սույն օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում տվյալ անձանց կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում՝ տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող գներից էականորեն ցածր գներով,
- «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը, բացառությամբ նախատեսված դեպքերի:

ՀՀ ներքին տարածք ներմուծվող ապրանքներից ԱԱՀ հաշվարկվում և գանձվում է մաքսային մարմինների կողմից ՀՀ սահմանին, բացառությամբ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքների, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, և որոնք ենթակա են ակցիզային հարկով հարկման:

Բացառություններ հարկման օբյեկտից

ԱԱՀ չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)՝

- պետական տուրքի գումարը.
- ՀՀ կառավարության որոշումների հիման վրա՝ հարկ վճարողների կողմից՝ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները,
- մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում՝ սույն օրենքով սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառության և ստացված հատուցման տարբերությունը.
- իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման (այդ թվում՝ սեփականաշնորհման), ինչպես նաև ապապետականացման գործարքները.
- բռնագրավման կամ նվիրատվության ձևով գույքի կամ գույքային իրավունքի օտարումը պետությանը.
- ՀՀ բյուջետային հիմնարկների կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը՝ այն մասով, որից հասույթն ամբողջությամբ հաշվեգրվել է պետական կամ համայնքների բյուջեների օգտին.
- ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը.
- Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության մեկնող քաղաքացիների անձնական գույքի ներմուծումը :

ԱԱՀ-ի գանձման միասնական սկզբունք

1997թ. հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է ԱԱՀ գանձման միասնական սկզբունք՝ ըստ «նշանակման վայրի»: Հայաստանի Հանրապետությունում ցանկացած երկրից ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ գանձվում է 20 տոկոս դրույքաչափով, իսկ Հայաստանի Հանրապետությունից ցանկացած երկիր արտահանող ապրանքների ու ծառայությունների համար սահմանված է հարկման զրոյական դրույքաչափ:

Օտարերկրյացիների հարկման առանձնահատկություններ

Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքներ իրականացնելիս (ներառյալ այդ անձանց սեփականությունը հանդիսացող սպրանքներ ներմուծելիս) պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ կոնտրագենտ) հանդիսացող Հայաստանի Հանրապետության անձինք (քաղաքացիները, անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձինք, տեղական ինքնակառավարման և պետական մարմինները) այդ գործարքների գծով օտարերկրյա անձանց փոխարեն կրում են հարկային պարտականություն՝ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Դրույքաչափ

ԱԱՀ-ի դրույքաչափը սահմանվում է 20 տոկոս սպրանքների և ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ:

ԱԱՀ-ի վճարումից ազատում

ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է: ԱԱՀ-ից, մասնավորապես, ազատվում են՝

- հանրակրթական դպրոցները, պրոֆտեխնիկական ուսումնարանները, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մասով,
- դպրոցական տետրերի և դասագրքերի, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը, բուհերի մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից հրատարակված գիտական և ուսումնական հրատարակությունների իրացումը,
- գիտահետազոտական աշխատանքները,
- արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը,
- նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատների, մանկատների, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատությունների, ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունները,
- թերթերի և ամսագրերի իրացումը,
- կրոնական ծիսակատարությունները, կրոնական կազմակերպություններին մատակարարվող կրոնական պարագաների, ինչպես նաև կրոնական կազմակերպությունների կողմից այդ պարագաների իրացումը,
- վիճակախաղերի տոմսերի անվանական արժեքով իրացումը,
- ապահովագրական և վերաապահովագրման գործառնությունները, ներառյալ՝ դրանց հետ կապված ապահովագրական միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները,

- կենսաթոշակային ապահովման գործառնությունները, ներառյալ՝ դրանց հետ կապված միջնորդների և գործակալների կողմից մատուցվող ծառայությունները,
- դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և պարագաների, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում՝ կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված սպրանքների և կատարված ծառայությունների իրացումը,
- միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային կամ շնորհային ծրագրերի նախապատրաստման միջոցների հաշվին սպրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով,
- հասարակական (այդ թվում՝ բարեգործական) և կրոնական կազմակերպությունների կողմից անհատույց սպասարկումը:

Բացի այդ մեծ է ԱԱՀ-ից ազատվող ֆինանսական գործարքների և ծառայությունների ցանկը: ԱԱՀ-ից ազատման արտոնություններն ու այլ արտոնությունները կարող են սահմանվել միմիայն օրենքով:

Հարկումը գրոյական դրույքաչափով

ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկումը՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածում նշված գործարքների իրացման շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառումն է: Ջրոյական դրույքաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) իրականացման դեպքում ԱԱՀ վճարողների մոտ դրանց հետ կապված ձեռքերված սպրանքների և մատուցված ծառայությունների գծով մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ գումարները ենթակա են վերադարձման (հաշվանցման):

Հարկային հաշիվներ

ԱԱՀ վճարողներն ավելացված արժեքի հարկով հարկվող սպրանքներ մատակարարելու և ծառայությունների մատուցելու դեպքում պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ: Հարկային հաշիվ է համարվում սպրանքների մատակարարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող սահմանված կարգի հաշվարկային փաստաթուղթը, որում առանձնացված է ԱԱՀ-ի գումարը: ԱԱՀ-ի հաշվարկման, հաշվանցման (հանման) համար հիմք են ընդունվում միայն համապատասխան ձևով ձևակերպված հարկային հաշիվները, որոնցում առանձին տողով նշված է հարկի գումարը: «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում տրված է տվյալների ցանկը, որոնք պարտադիր կերպով պետք է նշված լինեն հարկային հաշիվում:

ԱԱՀ վճարող անձինք պարտավոր են ժամանակագրական կարգով հաշվառել և դուրս գրման օրվան հաջորդող առնվազն երեք տարվա ընթացքում պահպանել իրենց կողմից տրված բոլոր հարկային հաշիվների պատճենները, սպրանքների ու ծառայությունների ձեռք բերման ժամանակ ԱԱՀ-ի վճարումը հաստատող հաշիվները, սպրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին ԱԱՀ վճարումը հաստատող հայտարարագրերը, ինչպես նաև ԱԱՀ հաշվարկման և վճարմանը վերաբերվող այլ փաստաթղթեր:

ԱԱՀ վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգ

2001թ. հուլիսի 1-ից մտցված է ԱԱՀ վճարողներին հաշվետու ժամանակաշրջանում մատակարարներից ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների համար դուրս գրված հարկային հաշիվների, ինչպես նաև նրանց կողմից մատակարարված ապրանքների և ծառայությունների համար դուրս գրված հարկային հաշիվների մասին հարկային մարմիններ տեղեկությունների տրամադրման հատուկ կարգ: Համաձայն ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 30-ի թիվ 481 որոշման, երբ հարկվող շրջանառության գումարը գերազանցում է 500 հազ. դրամը, ներառյալ ստացված կամ ներկայացված հաշիվները, հարկատուն պարտավոր է ներկայացնել տվյալ տեղեկությունը հարկային մարմիններին: Հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ապրանքների մատակարարման կամ ձեռք բերման և ծառայությունների մատուցման կամ ստացման գծով ԱԱՀ գումարները չներառելու դեպքում տեղեկություններ ներկայացնող անձը վճարում է տուգանք սխալ ներկայացված յուրաքանչյուր տեղեկության (հարկային հաշվի) համար 5 հազ. դրամի չափով:

Հարկի հաշվարկումը և վճարման ժամկետներ

ԱԱՀ գումարների վճարումը պետական բյուջե կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար:

Այն անձինք, որոնց գործարքներից հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60 մլն. դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

Հաշվարկված ԱԱՀ գումարների վճարումը պետական բյուջե կատարվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանի հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: ԱԱՀ կանխավճարներ չեն կատարվում: ԱԱՀ վերջնահաշվարկ ներկայացվում է ամեն հաշվետու ժամանակաշրջանում, այն ժամկետում, որը սահմանված է հարկի վճարման համար:

Պատասխանատվությունը խախտման համար

ԱԱՀ հարկվող շրջանառությունը թաքցնելու կամ պակաս ցույց տալու, ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգի խախտումով ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ գումարները պակասացնելու (հաշվանցելու) հետևանքով բյուջե վճարման ենթակա ԱԱՀ գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ԱԱՀ գումարը, ինչպես նաև տուգանք այդ գումարի 50 տոկոսի չափով:

VI. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ենթակցիզային ապրանքներ

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են գարեջուրը, խաղողի և այլ գինիները, գինեկոնյուրը, սպիրտը և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարետները, սիգարելաները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ամիսաջրածինները (բացառությամբ բնական գազի):

Վճարողներ

Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկ վճարում են ենթակցիզային ապրանքների ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ շշայցնող կամ այլ կերպ տարայավորող) իրավաբանական (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) և ֆիզիկական անձինք:

Բացառություններ հարկման օբյեկտից

Ակցիզային հարկով չեն հարկվում՝

- Հայաստանի Հանրապետությունից ակցիզային հարկով հարկման ենթակա՝ արտահանված ապրանքների օտարումը (իրացումը), եթե առկա է «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված փաստաթուղթը,
- «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող՝ ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված մաքսային ռեժիմներով հանրապետության մաքսային տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները,
- օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված տիրագուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը և օտարումը,
- մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ ապրանքների քանակը կամ մաքսային արժեքը չգերազանցող չափով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները:

Դ-րույքաչափեր

Ակցիզային հարկի ռոու ԹՈՍՏՈՒԻԻԻ	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի ռոու ԹՈՍՏՈՒԻԻԻԻ (ռոում)
--------------------------------	-----------------------	------------------------	---

		տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	
2208		Սպիրտային խմիչքներ այդ թվում՝	1500
2208	20	խաղողի գինու կամ գինենյութի թորումից ստացվող սպիրտային թրմեր (կոնյակ, արմանյակ և այլն)	1200
2208 2208 70	60,	օղի, լիկյորներ և մրգօղիներ	300
2403		Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ
2709		Հում նավթ և նավթամթերքներ	1 տոննա
2711 (բացառությամբ 2711 11 և 2711 21)		Նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի) ^{*1)}	1 տոննա

2208 ծածկագրում ներառված՝ 40 տոկոսից բարձր սպիրտայնությամբ ապրանքատեսակների համար սպիրտայնության՝ 40 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր տոկոսային կետի համար հարկի դրույքաչափն ավելացվում է 7,5 դրամով:

Ծխախոտի արտադրանքի և ներմուծվող դիզելային վառելիքի ու բենզինի ակցիզային հարկի դրույքաչափերը սահմանվում են առանձին օրենքներով:

Հայաստանի Հանրապետությունում գործում է Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման կարգ:

Ակցիզային հարկի վճարումը ու հաշվետվությունների ներկայացում

Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողներն ակցիզային հարկը վճարում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը:

Հայաստանի Հանրապետությունում ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկ վճարող անձանց կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում: Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար հարկ վճարող անձանց համար ակցիզային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը, հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև դրան հաջորդող ամսվա 15-ից ոչ ուշ:

VII. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ

Պարզեցված հարկի հասկացությունը

Պարզեցված հարկը ձեռնարկատիրական գործունեության համար պետական բյուջե վճարվող՝ ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հարկ է:

Առևտրային կազմակերպությունների համար պարզեցված հարկը փոխարինում է ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և շահութահարկին: Անհատ ձեռնարկատերերի համար պարզեցված հարկը փոխարինում է ավելացված արժեքի հարկին (ԱԱՀ) և եկամտահարկին:

Վճարողները

Պարզեցված հարկ վճարող են համարվում իրենց հաշվառման վայրի հարկային մարմիններին «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքով (գործում է 2000թ. հուլիսի 1-ից) սահմանված ժամկետներում և կարգով հայտարարագիր ներկայացրած առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը: Պարզեցված հարկ վճարողներ կարող են համարվել անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում մատակարարված ապրանքների և մատուցած ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ավելացված արժեքի հարկի) չի գերազանցել 50 մլն. դրամը: Այդ սահմանափակումը չի տարածվում խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության վրա:

Պարզեցված հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

- «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն հաստատագրված վճար վճարող անձինք՝ գործունեության այդ մասով,
- ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները,
- անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և չիրացված այնպիսի ապրանքների մնացորդը, որոնց համար նախատեսված չէ ավելացված արժեքի հարկի գանձում ներմուծման պահին գերազանցում է 1 մլն. դրամը,
- տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ 100 հազ. և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը) ունեցող անձինք,
- վարկային կամ ապահովագրական կազմակերպությունները, ներդրումային հիմնադրամները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպման գործունեություն իրականացնողները, ատղիտորական կամ խորհրդատվական ծառայություններ մատուցողները,
- այն անձինք, որոնք դադարել են համարվել այդպիսիք, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Պարզեցված հարկ վճարող ճանաչելը

Տվյալ տարում հարկ վճարող համարվելու համար հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվում հունվարի 1-ից 25-ը ներառյալ:

Նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պետական գրանցում ստանալու օրվանից համարվում են պարզեցված հարկ վճարողներ, եթե նրանք մինչև պետական գրանցման եռամսյակին հաջորդող ամսվա 1-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել գրավոր դիմում՝ ընդհանուր կարգով հարկման, հաշվառման և հաշվետվությունների համակարգին անցնելու վերաբերյալ:

Հարկման օբյեկտ

Հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պարզեցված հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցած ծառայությունների իրացման շրջանառությունը:

Հարկի հաշվարկումն ու դրույքաչափերը

Ընթացիկ տարվա համար որոշվող հարկվող օբյեկտի նկատմամբ պարզեցված հարկը հաշվարկվում է իրացման շրջանառության նկատմամբ հետևյալ դրույքաչափերով՝

1. խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով՝ 3.5 տոկոս:
2. վարձակալության մասով՝ 10 տոկոս
3. նոտարական գործունեության մասով՝ 20 տոկոս
4. այլ գործունեության մասով՝ 5 տոկոս:

Հարկ վճարողները պարզեցված հարկի գումարների հաշվարկումը կատարում են ինքնուրույն, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով:

Հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված պարզեցված հարկի գումարը նվազեցվում է տվյալ ժամանակաշրջանում ձեռք բերված՝ գործունեության իրականացումն ապահովելու նպատակով ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև աշխատանքի վարձատրության համար կատարված՝ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (ներառյալ՝ անուղղակի հարկերը):

Եթե նվազեցումներից հետո պարզեցված հարկի գումարը տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով իրացման շրջանառության 2 տոկոսից պակաս, իսկ գործունեության մնացած տեսակների մասով 3,5 տոկոսից պակաս, ապա պարզեցված հարկը վճարվում է համապատասխանաբար 2 տոկոս և 3,5 տոկոս դրույքաչափերով, իսկ հարկի գումարի չնվազեցված մասը նվազեցվում է հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված հարկի գումարից:

Հաշվարկների ներկայացումն ու հարկի վճարումը

Պարզեցված հարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանի հաջորդող ամսվա 25-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում հարկի հաշվարկը:

VIII. ՀԱՐԿՈՒՄՆ ԵԿԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՐԹՅՈՒՐԻ ՍՈՏ

Կիրառման ոլորտը

Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ: Հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած եկամտից վճարման աղբյուրի մոտ, հարկային գործակալները շահութահարկը պահում (գանձում) են հետևյալ չափերով՝

Եկամտի տեսակը	հարկի չափը տոկոսով
ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	5
շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ, գույք վարձակալության տալուց ստացած եկամտի, գույքի արժեքի հավելած և այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից), ինչպես նաև այլ՝ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ	10

Հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտի ստացած շահաբաժինները հարկվում են 0 տոկոս դրույքաչափով, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները՝

- շահաբաժիններն ստացող ոչ ռեզիդենտն այդ եկամուտների մասով ենթակա չէ շահութահարկով հարկման այն երկրում, որի ռեզիդենտն է հանդիսանում, - մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը), որի դիմաց ստացվում են շահաբաժինները, ոչ ռեզիդենտին է պատկանել ոչ պակաս, քան 2 օրացույցային տարվա ընթացքում,
- շահաբաժիններ բաշխող ռեզիդենտի կանոնադրական կապիտալում շահաբաժիններ ստացող ոչ ռեզիդենտի մասնակցությունը շահաբաժինների բաշխմանն անմիջապես նախորդող 2 օրացույցային տարիների ընթացքում, կազմել է ոչ պակաս, քան կանոնադրական կապիտալի 25 տոկոսը,
- շահաբաժիններ ստացող ոչ ռեզիդենտը հանդիսանում է դրանց փաստացի սեփականատերը:

Եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկման դրույքաչափերը կարող են նվազեցվել համաձայն «Եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» գործող համապատասխան համաձայնագրի:

Գումարները, որոնք պահվում են հարկային գործակալի կողմից, համարվում են շահութահարկի վերջնական գումար, վճարված ոչ ռեզիդենտի կողմից (եկամտահարկի դեպքում՝ եկամտահարկի վերջնական գումարը, վճարված օտարերկրյա ֆիզիկական անձի կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից) Հայաստանում, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

- ոչ ռեզիդենտը Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է գործունեության ստորաբաժանման կամ հարկային մարմինների կողմից ճանաչված վայրի միջոցով և այդ եկամուտը համարվում է այդպիսի ստորաբաժանման կամ վայրի գործունեության արդյունք,

- երբ օտարերկրյա ֆիզիկական անձը կամ քաղաքացիություն չունեցող անձը համարվում է ռեզիդենտ, կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացրել է ձեռնարկատիրական գործունեություն համաձայն կարգի, որը սահմանված է օրենսդրությամբ և վճարված եկամուտները արդյունք են ձեռնարկատիրական գործունեության:

Հարկային համաձայնագրեր

Համաձայն «Եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին» ՀՀ և այլ պետությունների միջև գործող պայմանագրերի եկամտի վճարման աղբյուրի մոտ պահվող (զանձվող) առավել թույլատրելի դրույքաչափերն են՝

Պետություն	Պայմանագրի դրույթները գործում են	Շահաբաժիններ (%)	- Տոկոսներ (%)	Ռոյալթիներ (%)
1. Բուլղարիա	01.01.1996թ.	5 ¹ /10	10	10
2. Չինաստան	01.01.1997թ.	5 ² /10	10	10
3. Ուկրաինա	01.01.1997թ.	5 ² /15	10	0
4. Իրան	01.01.1998թ.	5 ² /15	10	5
5. Ռումինիա	01.01.1998թ.	5 ² /10	10	10
6. Ռուսաստան	01.01.1999թ.	5 ¹ /10	0	0
7. Թուրքմենստան	01.01.2000թ.	5 ² /15	10	10
8. Լիբանան	01.01.2001թ.	5 ² /10	8	5
9. Վրաստան	01.01.2001թ.	5 ² /10	10	5
10. Ֆրանսիա	01.01.2002թ.	5 ³ /15	10	5/10 ⁴
11. Լատվիա	01.01.2002թ.	5 ² /15	10	10
12. Լիտվա	01.01.2002թ.	5 ² /15	10	10
13. Բելառուս	01.01.2002թ.	10 ² /15	10	10

Ծանոթություն

- 1) շահաբաժինների նկատմամբ 5 տոկոսանոց դրույքաչափը կիրառվում է այն դեպքում, երբ շահաբաժիններ ստացող անձը մասնակցում է շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) առնվազն 40,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարով.
- 2) շահաբաժինների նկատմամբ 5 տոկոսանոց (Բելառուսի հետ՝ 10) դրույքաչափը կիրառվում է շահաբաժիններ ստացող անձի շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալում 25 տոկոսանոց (Ֆրանսիայի հետ 10, իսկ Բելառուսի հետ 30 տոկոս) մասնակցությամբ.
- 3) նախատեսված են որոշակի սահմանափակումներ աղբյուր-պետությունում հարկի զանձման առումով.
- 4) 5 տոկոսանոց դրույքաչափը կիրառվում է հեղինակային իրավունքների, իսկ 10 տոկոսը՝ մնացած դեպքերում: